*Հաստատված է*
*Եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2019 թվականի նոյեմբերի 29-ի*
*թիվ 12 նիստում,*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*
*Լրամշակված է*
*Եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2023 թվականի օգոստոսի 29-ի*
*թիվ 12 նիստում,*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

***Approved by***
*the Scientific Council of*
*European University of Armenia*
*At the Session N 12*
*November 29, 2019*
*Rector: H. Bisharyan*
***Amended by***
*the Scientific Council of*
*European University of Armenia*
*At the Session N 12*
*November 29, 2019*
*Rector: H. Bisharyan*

______________________________
(ստորագրություն, Կ.Տ. /Signature)

# ԿԱՐԳ ՀԵՀ-ՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

# ORDER ON PREPARATION, DEFENSE, ASSESSMENT AND APPEAL OF INDIVIDUAL PAPERS/ RESEARCH PROJECTS AND INDIVIDUAL ASSIGNMENT PAPERS AT THE EUA

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.1** Սույն կարգը նախատեսված է ՀԵՀ բակալավրի առկա ուսուցման համակարգում սովորողի կրթական ծրագրերով նախատեսված անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի և հեռակա ուսուցման համակարգում սովորողի կրթական ծրագրերով նախատեսված ինքնուրույն աշխատանքների պատրաստման, պաշտպանության, գնահատման ու բողոքարկման համար:

***1.2*** ՀԵՀ-ում անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի (առկա ուսուցման դեպքում) և ինքնուրույն աշխատանքի (հեռակա ուսուցման դեպքում) պատրաստումը, պաշտպանությունը, գնահատումն ու բողոքարկումը կանոնակարգ-

## 1. GENERAL PROVISIONS

1.1 This order is intended for the preparation, defense, evaluation and appeal of the individual paper/research project set by Bachelor’s degree programs for full-time studies and the individual assignment paper for part-time studies.

1.2 The preparation, defense, evaluation and appeal of individual paper/research project (in case of full-time learning) and individual assignment paper (in case of part-time learning) at theEUA is regulated by this order, other orders arising from this order

վում է սույն կարգով, սույն կարգից բխող այլ կարգերով և մեթոդական ուղեցույցներով:

and methodological guidelines.

**1.3** Անհատական աշխատանքը ինքնուրույն աշխատանք է, որում ուսանողը առաջադրում է կոնկերտ խնդիրներ և լուծում է դրանք:

1.3 Individual paper is an independent work in which the student poses concrete objectives and solves them.

**1.4** Անհատական աշխատանքը հանձնարարվում է առկա ուսուցման համակարգում սովորողին և նպատակ ունի ստուգելու ուսանողի մասնագիտական տեսական և գործնական գիտելիքների յուրացման աստիճանը, ձևավորելու ինքնուրույն, ստեղծարար մտածողությունը զարգացնող հմտություններ և կարողություններ:

1.4 The individual paper is assigned to the full-time student and aims to check the level of assimilation of the student's professional theoretical and practical knowledge, to form skills and abilities that develop independent, creative thinking**.**

**1.5** Հետազոտական նախագիծը հանձնարարվում է առկա ուսուցման համակարգում սովորողին և նպատակ ունի ստուգելու ուսանողի հետազոտական աշխատանք կատարելու, նախագիծ մշակելու, նորարարական մոտեցումներ ցուցաբերելու, հավաքագրված տեղեկատվութունը վերլուծելու և հետազոտական արդյունքները ներկայացնելու հմտություններ ու կարողություններ:

1.5 The research project is assigned to the full-time student and aims to test the student's skills and abilities to carry out research work, develop a project, demonstrate innovative approaches, analyze collected information and present research results.

**1.6** Ինքնուրույն աշխատանքը հանձնարարվում է հեռակա ուսուցման համակարգում սովորողին և նպատակ ունի ստուգելու ուսանողի ստացած տեսական գիտելիքները գործնականում ինքնուրույն կիրառելու կարողությունները, ստեղծարարար և վերլուծական հմտությունները:

1.6 The individual paper is assigned to the part-time student and aims to check the student's ability to independently apply theoretical knowledge, creative and analytical skills.

**1.7** Անհատական աշխատանքում/ հետազոտական նախագծում (առկա ուսուցման դեպքում) պետք է ներկայացվի.

- ընտրված թեմայի հիմնավորումը,
- աշխատանքի ընթացքի նկարագիրը,
- եզրակացությունները և առաջարկությունները:

1.7 In the individual paper/ research project (in case of full-time learning) should be presented:

- justification of the chosen topic,
- description of the work process,
- conclusions and recommendations.

**1.8** Ինքնուրույն աշխատանքում (հեռկա ուսուցման դեպքում) պետք է ներկայացվի.

- աշխատանքի բնութագիրը,
- աշխատանքի ընթացքի նկարագիրը,
- աշխատանքի արդյունքները:

1.8 In the individual assignment paper (in the case of part-time learning) should be presented:

- job description,
- description of the work process,
- work results.

## 2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ / ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

## 2. PREPARATION OF INDIVIDUAL PAPERS / RESEARCH PROJECTS (IN CASE OF FULL-TIME LEARNING) AND INDIVIDUAL ASSIGNMENT PAPERS (IN CASE OF PART-TIME LEARNING).

**2.1** Անհատական աշխատանքների/ հետազոտական նախագծերի (առկա ուսուցման դեպքում) և ինքնուրունն աշխատանքների (հեռակա ուսուցման դեպքում) թեմաները որոշվում և հաստատվում են դասընթացի առարկայական ծրագրով՝ ուսումնական տարվա սկզբում:

2.1 The topics of individual papers/research projects (in the case of full-time learning) and individual assignment papers (in the case of part-time learning) are determined and approved by the syllabi of the course at the beginning of the academic year.

**2.2** Անհատական աշխատանքների/ հետազոտական նախագծերի (առկա ուսուցման դեպքում) և ինքնուրույն աշխատանքների (հեռակա ուսուցման դեպքում) թեմաները դասընթացի դասախոսի կողմից կիսամյակի սկզբում տրվում է ուսանողներին՝ ընտրելու համար:

2.2 The topics of individual papers/post-graduation projects (in the case of full-time learning) and individual assignment papers (in the case of part-time learning) are given to the students to choose from by the course lecturer at the beginning of the semester.

**2.3** Անհատական աշխատանքների/ հետազոտական նախագծերի (առկա ուսուցման դեպքում) և ինքնուրույն աշխատանքների (հեռակա ուսուցման դեպքում) հանձնման վերջնաժամկետը սահմանում է դասընթացի դասախոսը՝ ոչ ուշ քան տվյալ կիսամյակի քննաշրջանից երկու շաբաթ առաջ:

2.3 The deadline for submission of individual papers/postgraduate projects (in the case of full-time learning) and individual assignment papers (in the case of part-time learning) is set by the course lecturer no later than two weeks before the exam period of the given semester.

**2.4** Դասընթացի դասախոսը աշխատանքի պատրաստման գործընթացում կատարում է հետևյալ աշխատանքները.

- ուղղորդում է անհատական աշխատանքում/հետազոտական նախագծում, ինք-

2.4 The course lecturer performs the following tasks in the process of work preparation:

- directs the questions included in the individual paper/research project,

նուրույն աշխատանքում ընդգրկված հարցադրումները,
- խորհուրդ է տալիս օգտագործել անհրաժեշտ մասնագիտական գրականություն, այդ թվում՝ էլեկտրոնային գրականություն, վիճակագրական տեղեկատուներ, արխիվային նյութեր և թեմայի հետ կապված այլ աղբյուրներ,
- հաստատված ժամանակացույցով անցկացնում է նախատեսված պարբերական խորհրդատվություններ,
- կազմակերպում է անհատական աշխատանքի/հետազոտական նախագծի բանավոր ներկայացման գործընթացը (առկա ուսուցման դեպքում),
- գնահատում է կատարված աշխատանքը:

individual assignment paper,
- recommends the use of necessary professional literature, including electronic literature, statistical directories, archival materials and other sources related to the topic;
- conducts planned periodic consultations according to the approved schedule,
- organizes the process of oral presentation of individual paper/research project (in case of full-time learning),
- evaluates the work

## 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**3.1** Անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի ծավալը պետք է լինի առնվազն 10 էջ, ինքնուրույն աշխատանքի ծավալը պետք է լինի առնվազն 7 էջ: Այս պահանջը կարող է մասնավորեցվել ելնելով մասնագիտության առանձնահատկություններից:

**3.2** Անհատական աշխատանքը/ հետազոտական նախագիծը և ինքնուրույն աշխատանքը պատրաստվում է MS WORD ծրագրով:

**3.3** Սահմանվում են անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի և ինքնուրույն աշխատանքի էջերի հետևյալ չափերը (Page Setap և Paragraph) (տե՛ս աղյուսակ 1).

## 3. REQUIREMENTS FOR INDIVIDUAL PAPERS/RESEARCH PROJECTS AND INDIVIDUAL ASSIGNMENT PAPERS

3.4 The volume of individual papers/ research projects should be at least 10 pages, the volume of individual assignment paper should be at least 7 pages. This requirement can be customized based on the specifics of the profession.

3.5 The individual paper/ research project and individual assignment papers are done by MS WORD program.

3.6 The following dimensions (Page Setup and Paragraph) of individual paper/research project and individual assignment paper pages are defined (see table 1).

Chart 1

Անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի և ինքնուրույն աշխատանքի էջերի չափերը և պահանջները/ Page sizes and requirements for individual paper/research project and individual assignment paper

| | |
|---|---|
| Թղթի ձևաչափը/Paper size | A4(21.0x29.7) |
| Տառատեսակ/Font (հայերեն լեզվի համար) for Armenian language | Sylfaen/GHEA Grapalat |
| Տառատեսակ/Font (անգլերեն նայլլեզուների համար) for Armenian and other languages | Times New Roman |
| Քանոններ՝/rulers: Վերև/Top | 2 սմ/2cm |
| Ներքև/Bottom | 2 սմ/2cm |
| Ձախ/Left | 3սմ/3cm |
| Աջ/Right | 1սմ/1cm |
| Տառաչափ/Size | 12 |
| Միջտողային տարածություն/Line spacing | 1,5 |
| Tab | 1սմ/1cm |

**3.4** Անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի և ինքուրույն աշխատանքի էջերը պետք է համարակալել՝ էջի ստորին հատվածում, կողմնորոշումը՝ աջ: Տիտղոսաթերթի և բովանդակության էջերը չեն համարակալվում:

3.7 The pages of individual paper/ research project and individual assignment paper should be numbered at the bottom of the page, orientation - right. Title page and contents pages are not numbered.

**3.5** Հղումները և աշխատանքին վերաբերող ծանոթագրությունները պետք է տեղադրվեն տողատակում:

3.8 References and footnotes of the work should be placed in footnotes.

**3.6** Բոլոր հղումներում, մեջբերումներում պետք է նշվեն հեղինակին, աշխատության անվանումը, հրատարակչության վայրը, տարեթիվը և էջը (էջերը)՝ բնագրի լեզվով: Էլեկտոնային նյութերից հղումներ կատարելիս պետք է նշել էլեկտրոնային կայքի հասցեն, այդ կայքի այն որոշակի էջը, որից կատարվել է հղումը, նյութի վերնագիրը, ինչպես նաև վերջին դիտման ամսաթիվը:

3.9 In all references, citations, the author, the title of the work, the place of publication, the year and the page(s) should be indicated in the original language. When making links from electronic materials, it is necessary to cite the address of the electronic site, the specific page, the title of the material, as well as the date of last viewing.

**3.7** Աշխատանքում ներառված աղյուսակները, գծանկարները, նկարները, բանաձևերը պետք է համարակալվեն և վերնագրվեն:

3.10 The pages of individual paper/ research project and individual assignment paper should be numbered at the bottom of the page, orientation - right. Title page and contents pages are not numbered.

## 4. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ԻՆՔՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**4.1** Անհատական աշխատանքը/ հետազոտական նախագծը և ինքուրույն աշխատանքը ունի հետևյալ կառուցվածքը.

- Տիտղոսաթերթ *(հավելված 1),*
- Բովանդակություն *(հավելված 2),*
- Ներածություն,
- Հիմնական մասեր,
- Եզրակացություններ և առաջարկություններ,
- Օգտագործված գրականության ցանկ,
- Հավելվածներ:

## 4. STRUCTURE OF INDIVIDUAL PAPER/RESEARCH PROJECT AND STUDENT SELF-STUDY

4.4 The individual paper/research project and student self-study has the following structure.

- Cover page (Appendix 1),
- Contents (Appendix 2),
- Introduction,
- Main parts,
- Conclusions and recommendations,
- References
- Appendices

## 5. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**5.1** Դասախոսը անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի և ինքնուրույն աշխատանքի գնահատումը իրականացնում է օբյեկտիվ և թափանցիկ ձևով՝ ՀԵՀ գնահատման քաղաքականության և գնահատման ռուբրիկներին համապատասխան:

**5.2** Անհատական աշխատանքը/ հետազոտական նախագծը (առկա ուսուցման դեպքում) և ինքնուրույն աշխատանքը (հեռակա ուսուցման դեպքում) գնահատվում է 100 միավորանոց համակարգով *(հավելված 3):*

**5.3** Առկա ուսուցման դեպքում անհատական աշխատանքները/ հետազոտական նախագծերը ենթական են բանավոր պաշտպանության համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետի: Վերջիններիս գնահատականները հայտարարվում են

## 5. EVALUATION OF INDIVIDUAL PAPER/RESEARCH PROJECT AND INDIVIDUAL ASSIGNMENT PAPER

5.4 The lecturer carries out the assessment of individual paper/research project and individual assignment papers in an objective and transparent manner, in accordance with EUA assessment policy and assessment rubrics.

5.5 The individual paper/ research project (in the case of full-time learning) and individual assignment paper (in the case of part-time learning) are evaluated with a 100-point grading system (Appendix 3).

5.6 In case of full-time learning, individual papers/research projects are subject to oral defense according to Clause 6 of this regulation. The grades of the latter are announced on the day of the oral presentation by the lecturer after the end of

բանավոր ներկայացման օրը՝ դասախոսի կողմից՝ բանավոր ներկայացման ավարտից հետո: Ինքնուրույն աշխատանքները ենթակա չեն բանավոր ներկայացման և վերջիններիս գնահատականները փակցվում են հայտարարությունների համար նախատեսված վայրում քննաշրջանի ամփոփումից հետո:

the oral presentation. The individual papers are not for oral presentation and their evaluations are posted in the place provided for announcements after the exam period is concluded.

**5.4** Անհատական աշխատանքի գնահատականը անցկացվում է դասընթացի գնահատման ամփոփագրում և մյուս կշիռների գնահատականների հետ միասին վավերացվում է դասախոսի ստորագրությամբ:

5.7 The evaluation of individual assignment paper is carried out in the evaluation summary sheet of the course and together with the evaluations of other weights, it is validated by the signature of the lecturer.

## 6. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## 6. GUIDE FOR THE ORAL DEFENSE OF AN INDIVIDUAL PAPER/RESEARCH PROJECT

**6.1** Դասախոսը աշխատանքը թույլատրում է բանավոր ներկայացման՝ տեխնիկական և բովանդակային պահանջները բավարարելու դեպքում:

6.4 The lecturer allows the work for oral presentation if it meets the technical and content requirements.

**6.2** Պատրաստ անհատական աշխատանքը/հետազոտական նախագիծը ներկայացվում է դասախոսին՝ նրա կողմից սահմանված ժամկետում:

6.5 The finished individual paper/research project is submitted to the lecturer within the time limit set by him/her.

**6.3** Դասախոսը անհատական աշխատանքին/հետազոտական նախագծին ներկայացվող պահանջներին համապատասխանությունը ստուգելով՝ թույլատրում է բանավոր ներկայացման:

6.6 The lecturer, after checking the compliance with the requirements submitted to the individual paper/research project, allows an oral presentation.

**6.4** Անհատական աշխատանքի/հետազոտական նախագծի բանավոր ներկայացումը անցկացվում է դասախոսի կողմից նշանակված օրը:

6.7 Oral presentation of individual paper/research project is held on the day appointed by the lecturer.

**6.5** Անհատական աշխատանքը/հետազոտական նախագիծը չի թույլատրվում բանավոր ներկայացման, եթե.

- ուսանողը խախտել է անհատական աշխատանքի/հետազոտական

6.8 The individual paper/research project is not allowed for oral presentation if:

- the student violated the requirements for the performance of individual

նախագծի կատարման պահանջները,

- առկա է անհատական աշխատանքի/հետազոտական նախագծի ներկայացման ժամկետների և ձևի անհամապատասխանություն:

paper/research project,

- there is inconsistency in terms and form of submission of individual paper/research project.

**6.6** Անհատական աշխատանքի/հետազոտական նախագծի բանավոր ներկայացման ժամանակ ուսանողը մինչև 10 րոպեի ընթացքում ներկայացնում է աշխատանքի հիմնական դրույթները:

6.9 During the oral presentation of the individual paper/research project, the student presents the main points of the work within 10 minutes.

**6.7** Ելույթից հետո ուսանողին տրվում են հարցեր:

6.10 After the speech, the student is asked questions.

**6.8** Անհատական աշխատանքի/հետազոտական նախագծի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած ուսանողների համար դասախոսի կողմից նշանակվում է բանավոր ներկայացման ևս մեկ օր:

6.11 One more day of oral presentation is appointed by the lecturer for students who are allowed to defend their individual paper/research project but did not appear.

**6.9** Բուհի կողմից արտոնված ձևերով և ժամկետներում արտասահմանում մասնակի ուսումնառություն անցած ուսանողների անհատական աշխատանքների/հետազոտական նախագծերի բանավոր ներկայացումը կարող է իրականացվել Ֆակուլտետի դեկանի կողմից առաջադրված և ՀԵՀ ռեկտորի կողմից հաստատված առանձին ժամկետներում:

6.12 The oral presentation of individual papers/research projects of students who have completed partial studies abroad in the forms and terms approved by the University can be carried out in separate terms nominated by the Dean of the Faculty and approved by the Rector of the University.

**6.10** Անհատական աշխատանքի/հետազոտական նախագծի գնահատականը կարող է բողոքարկվել՝ համաձայն սույն կարգի 7-րդ կետի:

6.13 The evaluation of an individual paper/research project may be appealed in accordance with clause 7 of these regulations.

## 7. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ/ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ և ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

## 7. INDIVIDUAL PAPER/RESEARCH PROJECT AND INDIVIDUAL ASSIGNMENT PAPER GRADE APPEAL

**7.1** Անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի և ինքնուրույն աշխատանքի գնահատականի բողոքարկումը

7.4 The appeal of the assessment of individual paper/ research project and individual assignment paper is the review of

ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքի գնահատման վերանայումն է:

the assessment of the knowledge demonstrated by the student.

**7.2** Ուսանողը պետք է տեղեկացված լինի գնահատման կարգին, սկզբունքներին, բաղադրիչներին, ինչպես նաև գնահատականի բողոքարկման ընթացակարգին:

7.5 The student must be informed about the assessment procedure, principles, components, as well as the assessment appeal procedure.

**7.3** Ուսանողը կարող է բողոքարկել անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի գնահատականը՝ գնահատականի հրապարակման պահին, իսկ ինքնուրույն աշխատանքի դեպքում՝ հրապարակումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

7.6 The student can appeal the grade of individual paper/research project at the time of publication of the grade, and in the case of individual assignment paper, within one working day after publication.

**7.4** Անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի և բողոքարկումը իրականացվում է ուսանողի բանավոր անհամաձայնություն հայտնելու հիման վրա, իսկ ինքնուրույն աշխատանքի բողոքարկումը իրականացվում է ֆակուլտետ ներկայացված գրավոր դիմումի հիման վրա:

7.7 The appeal of individual paper/ research project is carried out on the basis of the student's verbal disagreement, and the appeal of individual assignment paper is carried out on the basis of a written application submitted to the faculty.

**7.5** Անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի, ինքնուրույն աշխատանքի գնահատականի բողոքարկումը իրականացվում է նույն օրը:

7.8 The appeal of the assessment of individual paper/research project, individual assignment paper is carried out on the same day.

**7.6** Անհատական աշխատանքի/ հետազոտական նախագծի, ինքնուրույն աշխատանքի գնահատման արդյունքների բողոքարկման ընթացքում դասախոսը լսում է տվյալ ուսանողի բողոքարկման փաստարկները:

7.9 During the appeal of the results of the assessment of individual paper/ research project, individual assignment paper, the lecturer listens to the arguments of the student's appeal.

**7.7** Ուսանողին լսելու արդյունքում դասա-խոսը՝

ա) վերանայում է ուսանողի գնահատականը՝ բարձրացնելով այն,

բ) գնահատականը թողնում է անփոփոխ:

7.10 As a result of listening to the student, the lecturer:

a) review the student's grade by increasing it,

b) leaves the score unchanged.

*Հավելված/Appendix 1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA**

**(16 pt, Bold)**

**__________________________ ԱՄԲԻՈՆ/CHAIR (14 pt, Bold)**

**INDIVIDUAL PAPER/ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**(ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ / RESEARCH PROJECT ԿԱՄ/OR**

**ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ/INDIVIUDAL ASSIGNMENT PAPER) (30 pt., Bold)**

**ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ/ TITLE (18 pt., Bold)______**

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/SPECIALTY:(18 pt., Bold)** «_______________________»

**ԴԱՍԸՆԹԱՑ/COURSE (18 PT., BOLD) ______________**

**ԿՈՒՐՍ/YEAR: (18 PT., BOLD) ______________**

**ՈՒՍԱՆՈՂ/STUDENT (18 PT., BOLD) ______________**

**ԴԱՍԱԽՈՍ/ LECTURER:(18 PT., BOLD) _________________** _________________

գիտական աստիճան, կոչում ԱԱՀ ստորագրություն/signature

Full name, scientific degree, title

ԵՐԵՎԱՆ/YEREVAN 20__**(14 pt., Bold)**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/CONTENT**

Ներածություն/ Introduction……………………………………………………………… 3

Գլուխ 1/ Chapter 1 ………………………………………………………………………

1.1 ………………………………………………………………………………………..

1.2. ………………………………………………………………………………………

Գլուխ 2/ Chapter 2 ………………………………………………………………………

2.1 ……………………………………………………………………………………….

2.2 ……………………………………………………………………………………….

Եզրակացություններ և առաջարկություններ/ Conclusions and recommendations

…………………………………………………………………………………………….

Գրականության ցանկ/ References ………………………………………………………

Հավելվածներ/Appendices…………………………………………………………………

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/SPECIALTY: ________________________________ ,
ԴԱՍԸՆԹԱՑ/COURSE: ____________________________________________ ,
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ/FORM OF LEARNING:________________________________________,
ԴԱՍԸՆԹԱՑ/ COURSE: ___________________________________________,

| N | Թվանիշ / Code | Անուն ազգանուն հայրանուն / Full name | ***Գնահատման չափանիշ Evaluation criteria (առավելագույնը՝ 100 միավոր Maximum 100 points)*** | | | | **Ընդհամենը՝ Total** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| **1.** | | | | | | | |
| **2.** | | | | | | | |

Դասախոս՝ Lecturer:

______________________________________________ ____________________
(անուն, ազգանուն/ full name) (ստորագրություն/Signature)